

www.ter-hambardzum.do.am

ԽՈՐՀՈՒՐԴ
ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ

ԸՍՏ
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ԾԵՍԻ
Գրաբար-աշխարհաբար

Գրաբարից աշխարհաբար փոխադրեցին Երեւանի
Պետական Համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետի ուսանողները՝ ղե-
կավարությամբ ֆակուլտետի ղեկան
Գերաշնորհ Տ. Շահե Արքեպիսկոպոս Աճեմյանի

Խմբագիրներ՝ Դեոնդ քահանա Մայիլյան
Ֆլորա Կաբաղյան

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԶՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԿՐՈՆ ՀՈՉԱԿՄԱՆ 1700-ԱՄՅԱԿԻ
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
2001

Հրամանաւ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Սբ. Պատարագի խորհուրդը Վերջին ընթրիքի ժամանակ հաստատեց Հիսուս Քրիստոսը: Իր զոհաբերության խորհուրդն է Պատարագը, որով ամեն հավատացյալ մի պահ վերանում է ու հոգով վերապրում Նրա տառապանքը եւ Նրա անսահման սերը հանդէպ մարդկանց, որոնց համար Ինքը զոհվեց: Սբ. Պատարագը Սիրո խորհուրդն է, որովհետեւ դրանով Հայր Աստված սրբագործված հացն ու գինին Ս. Հոգու ներգործությամբ վերածում է Իր Սիածին Որդու Մարմնին ու Արյանը՝ դրանք բաշխելով ու ճաշակողներին միավորելով Իր հետ:

Պատարագի արարողության գիրքը կոչվում է Պատարագամատույց կամ Խորհրդատետր: Պատարագի արարողության կարգը առաջին երեք դարերում ընդհանուր էր բոլոր քրիստոնեական եկեղեցիներում: Ս. Գրիգոր Լուսավորիչը, Կեսարիայից բերելով Բարսեղյան կոչվող պատարագամատույցը, այն ավանդեց Հայ եկեղեցուն: Ժամանակի ընթացքում այդ պատարագամատույցը հայացվել է մշակվել է Հայ եկեղեցու հայրերի կողմից եւ այսօր էլ օգտագործվում է մեր եկեղեցում:

Ս. Պատարագի արարողությունը, ըստ հայոց Պատարագամատույցի բաժանվում է հետևյալ մասերի. ա. Պատրաստություն (զգեստավորում, լվացում, խոստովանություն, նախամուտ, առաջադրություն), բ. Ճաշու պաշտոն (խնկարկություն, ճաշումուտք, ընթերցվածք, Հավատամք), գ. Կանոն Ս. Պատարագի (մուտք, ողջույն, սրբագործություն, հիշատակություն, ճաշակում), դ. Արձակում:

Պատարագին մասնակցող գլխավոր դերակատարները՝ պատարագիչ քահանան, սարկավագը, դպիրներն են: Դպիրները ներկայացնում են ժողովուրդը, եւ այն, ինչ երգում են, արվում է ժողովրդի անունից, լինի դա պատասխան, թե գոհունակության արտահայտություն, թե խնդրանք: Պատարագիչ քահանայի եւ ժողովրդի, այսինքն՝ դպիրների միջեւ միջնորդը սարկավագն է՝ քահանայի օգնականը եւ սպասավորը: Խորհուրդների խորհուրդ համարվող Սբ. Պատարագի արարողության այս գրքույկը, որն ուղեկցվում է արեւելահայերեն զուգահեռ թարգմանությամբ, անկասկած օգտակար կլինի ծեսին հետեւելու, Սբ. Խորհրդի օրհնություններին եւ շնորհներին հաղորդ լինելու համար:

Դետոնդ քահանա Մայիլյան

ԽՈՐՀՈՒՐԴ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ

Շարական հանդերձի

(ի ձայն)

Խորհուրդ խորին, անհաս անսկիզբն, որ զարդարեցեր զվերին պետութիւնդ. ի յառազաստ անմատոյց լուսոյն. գերապանծ փառօք զդասս հրեղինաց:

Անճառահրաշ գորութեամբ ստեղծեր զԱդամ պատկեր տիրական, եւ նագելի փառօք զգեստաւորեցեր, ի դրախտն Ադենի տեղի բերկրանաց:

Չարչարանօք քո Սուրբ Միածնիդ, նորոգեցան արարածք ամենայն. եւ վերստին մարդն անմահացաւ, զարդարեալ ի զգեստ անկողոպտելի:

Անճրեւածին բաժակ հրահոսան, որ հեղեր յԱռաքեալսն ի սուրբ Վերնատանն. հեղ եւ ի մեզ Հոգիդ Սուրբ Աստուած, ընդ պատմունճանին զքո զիմաստութիւն:

Տան Քում վայել է սրբութիւն՝ որ զգեցար զվայելչութիւն. սրբութիւն փառաց ընդ մէջ Քո ամեալ. պատեա զմէջս մեր ճշմարտութեամբ:

Որ զարարչագործ բազուկս քո տարածեցեր ընդդէմ աստեղաց. հաստատեա զբազուկս մեր կարողութեամբ, համբարձմամբ ձեռաց առ քեզ միջնորդել:

Իիւսմամբ թագ ի գլուխ պատեցես զմիտս եւ զգայարանս. խաչանիշ ուրարմամբ ըստ Ահարովնի, ծաղկեալ յոսկեթել ի զարդ խորանին:

Բամից բոլորից տիրապէս Աստուածպետական նափորտապատ սիրով զմեզ զգեստաւորեցեր, Քում սուրբ խորհրդոյդ լինել սպասաւոր:

Թագաւոր երկնաւոր, զԵկեղեցի Քո անշարժ պահեա. եւ զերկրպագուս անուանդ քում պահեա ի խաղաղութեան:

Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Հանդերձի շարական

(եղանակով)

Խորհուրդ խորին՝ անհասանելի, անսկիզբ, որ զարդարեցիր երկնքի պետութիւնդ, անմատչելի լուսի առազաստի մեջ եւ հրեղենների դասը՝ զերապանծ փառքով:

Անճառելի եւ հրաշալի գործոյամբ ստեղծեցիր Ադամին՝ Տիրական պատկերիդ նման եւ սքանչելի փառքով զգեստավորելով նրան՝ Եղեմի դրախտի բերկրոյթյան վայրի մեջ դրեցիր:

Քո Սուրբ Միածնի չարչարանքներով նորոգվեցին բոլոր արարածները. եւ մարդը վերստին անմահացավ, ապահով զգեստով զարդարված:

Անձրեաբեր հրահոս բաժակ, որ հեղում էիր սուրբ Վերնատանը Առաքյալների վրա, եւ Սո՛ւրբ Հոգի Աստված, քահանայական պատմութեանիդ հետ մեզ վրա եւս լցրու Քո իմաստոյթյունը:

Քո տանը սրբոյթյուն է վայելում, որովհետեւ հագար վայելչոյթյուն, փառքի սրբոյթյունը մեջքիդ կապած, մեր մեջքերը եւս ճշմարտոյթյամբ պատիր:

Դու որ քո արարչագործ բազուկները տարածեցիր աստղերի դեմ, մեր բազուկները գորացրու կարողոյթյամբ, որ ձեռքերի համբարձմամբ Քեզ միջնորդ լինել:

Գլխի թագ հյուսելով՝ պատիր մեր մտքերը եւ զգայարանները խաչանիշ ուրարով՝ Ահարոնի նման, որպէս ոսկեթել զարդ ծաղկելով խորանին:

Ամբողջ երամից աստվածապետական սիրով հատուկ մեզ շուրջառապատ զգեստավորեցիր՝ Քո սուրբ խորհուրդիդ սպասավոր լինելու համար:

Երկնային Թագավոր, հաստատ պահիր Քո Եկեղեցին եւ Քո անվան երկրպագողներին խաղաղոյթյան մեջ պահիր:

Սաղմոս ԻԵ - Լուսցման սաղմոս

Քահանայ- Լուսցից սրբութեամբ զձեռս իմ, եւ շուրջ եղէց զսեղանով Քով, Տէ՛ր:

Սարկաւագ- Դա՛տ արա ինձ Տէր՝ զի եւ յամբժութեան իմում գնացի, ի Տէր յուսացայ՝ զի մի եղէց հիւանդ:

Քահանայ- Փորձեա՛ զիս Տէր, եւ քննեա՛ զիս. փորձեա՛ զերիկամունս իմ եւ զսիրտ իմ:

Սարկաւագ- Ողորմութիւն Քո Տէր, առաջի աչաց իմոց, եւ հաճոյ եղէց ճշմարտութեան Քում:

Քահանայ- Ոչ նստայց եւ յաթոռս նանրաց. եւ ընդ անօրէնս եւ ոչ մտից:

Սարկաւագ- Ատեցի եւ զժողովս չարաց. եւ ընդ ամբարիշտս եւ ոչ նստայց:

Քահանայ- Լուսցից սրբութեամբ զձեռս իմ. եւ շուրջ եղէց զսեղանով Քով, Տէ՛ր:

Սարկաւագ- Լսել ինձ զձայն օրհնութեան Քո. եւ պատմել զամենայն սքանչելիս Քո:

Քահանայ- Տէ՛ր, սիրեցի զվայելչութիւն տան Քո՝ եւ զտեղի յարկի փառաց Քոց:

Սարկաւագ- Մի՛ կորուսաներ ընդ անբարիշտս զանձն իմ, եւ մի ընդ արս արիւնահեղս զկեանս իմ:

Քահանայ- Որոց ձեռք իւրեանց յանօրէնութեան են. եւ աջ նոցա լի է կաշառօք:

Սարկաւագ- Ես յամբժութեան իմում գնացի. փրկեա՛ զիս, Տէ՛ր, եւ ողորմեա՛ ինձ:

Քահանայ- Ոտն իմ կացցէ յուղղութեան.

յեկեղեցիս մեծս օրհնեցից զՔեզ:

Փառք Հօր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ.

Այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտենից. ամէն:

Քահանայ- Եւ Վասն Սրբուհոյ Աստուածածնին բարեխօսութեան, Տէ՛ր, ընկա՛լ զաղաչանս մեր եւ կեցո՛ զմեզ:

Սաղմոս ԻԵ - Լվացման սաղմոս

Քահանայ- Սրբոյթյամբ լվանում եմ իմ ձեռքերը եւ Քո սեղանի շուրջը կլինեմ, Տէ՛ր:

Սարկավագ- Դատի'ր ինձ, Տե'ր, որովհետև ես իմ անմեղությամբ առաջնորդվեցի, Տիրոջը հուսացի, որպեսզի չհիվանդանամ:

Քահանա- Փորձի'ր ինձ, Տե'ր, եւ քննի'ր ինձ, փորձի'ր իմ երիկամները եւսիրտը:

Սարկավագ- Տե'ր, Քո ողորմությունը իմ աչքերի առջև է, եւ հաճո կլինեն Քո ճշմարտությանը:

Քահանա- Չեմ նստի ունայնամիտների աթոռին եւ անիրավների մեջ չեմ մտնի:

Սարկավագ- Ատեցի չարերի ժողովները եւ չարամիտների հետ չնստեցի:

Քահանա- Սրբությանը լվացի իմ ձեռքերը եւ Քո սեղանի շուրջ կլինեմ, Տե'ր:

Սարկավագ- Որ լսեմ Քո օրհնության ձայնը եւ պատմեմ Քո բոլոր հրաշքները:

Քահանա- Տե'ր, սիրեցի Քո տան վայելչությունը եւ Քո փառքերի բնակատեղին:

Սարկավագ- Կորստյան մի' մատնիք իմ անձը ամբարիշտների հետ եւ կորստյան մի' մատնիք կյանքս՝ արյունահեղ մարդկանց հետ:

Քահանա- Որոնց ձեռքերը խրված են անօրենության մեջ, եւ նրանց աջը լի է կաշառքով:

Սարկավագ- Ես իմ անմեղությունից հեռացա, փրկի'ր ինձ, Տե'ր, եւողորմի'ր ինձ:

Քահանա- Իմ ոտքը մնում է արդարության մեջ.

Եկեղեցու մեջ կօրհնեմ Քեզ:

Փառք Հորը եւՈրդուն եւ Սուրբ Հոգուն.

Այժմ եւ միշտ եւ հավիտյանս. ամեն:

Քահանա- Եվ Սրբուհի Աստվածածնի բարեխոսությամբ, Տե'ր, ընդունի'ր մեր աղաչանքները եւապրեցրո'ւ մեզ:

Սարկավագ- Սուրբ զԱստուածածինն եւ զամենայն սուրբս բարեխօս արասցուք առ Հայր ի յերկինս, զի կամեցեալ ողորմեսցի եւ գթացեալ կեցուցէ զարարածս իւր,ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո' եւ ողորմեա':

Քահանայ- Ընկա'լ, Տէ'ր, զաղաչանս մեր բարեխօսութեամբ Սուրբ Աստուածածինն՝ անարատ ծնողի Միածնի Որդոյ Քո, եւ աղաչանօք ամենայն սրբոց Քոց եւ որոց այսօր է յիշատակ (կամ ատուրս շնորհիւ), լո'ւր մեզ, Տէ'ր, եւ ողորմեա'. ներեա', քաւեա', եւ թո'ղ զմեղս մեր: Արժանատրեա' գոհութեամբ փառատրել զՔեզ ընդ Որդոյ եւ ընդ Սրբոյ Հոգոյդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Խոստովանիմ առաջի Աստուծոյ եւ սրբուհոյ Աստուածածնին. եւ առաջի ամենայն սրբոց. եւ առաջի ձեր, հարք եւ եղբարք՝ զամենայն մեղս գորս գործեալ եմ. քանզի մեղայ խորհրդով, բանի եւ գործով, եւ ամենայն մեղօք՝ գոր գործեն մարդիկ: Մեղայ, մեղայ: Աղաչեմ զձեզ՝ խնդրեցէ'ք վասն իմ յԱստուծոյ զթողութիւն:

Ժամօրհնող- Ողորմեսցի' քեզ Աստուած հօրն եւ թողութիւն շնորհեսցէ ամենայն յանցանաց քոց, անցելոյն եւ այժմուս եւ յառաջակայէն փրկեսցէ եւ հաստատեսցէ յամենայն գործս բարիս: Եւ հանգուցէ զքեզ ի հանդերձեալ կեանսն: Ամէն:

Քահանայ- Ազատեսցէ' եւ զձեզ մարդասէրն Աստուած, եւ թողէ զամենայն յանցանս ձեր. տացէ ժամանակ ապաշխարելոյ եւ գործելոյ զբարիս. ուղղեսցէ եւ զառաջակայ կեանս ձեր շնորհօք Սուրբ Հոգոյն, հօրն, եւ ողորմածն եւ նմա փառք յաւիտեանս. ամէն:

Դպիրք եւ ժողովուրդ- Յիշեսցիք եւ զմեզ առաջի անմահ Գառիկն Աստուծոյ:

Քահանայ- Յիշեալ լիջի'ք առաջի անմահ Գառիկն Աստուծոյ:

Սարկավագ- Սուրբ Աստվածածնին եւ բոլոր սրբերին բարեխոս դարձնենք Երկնա-
յին Հոր առջեւ, որ ցանկանալով ողորմում է, եւ գթալով ապրեցնում է Իր ստեղծած-
ներին. ամենակարող մեր Տէր Աստված ապրեցրո՛ւ եւ ողորմի՛ր:

Քահանա- Տէ՛ր, ընդունիր մեր աղաչանքները՝ Սուրբ Աստվածածնի՝ Քո Միածին
Որդու անարատ ծնողի բարեխոսութեամբ եւ Քո բոլոր սրբերի աղոթքներով: Լսի՛ր
մեզ, Տէր եւ ողորմի՛ր, ների՛ր, քավութիւն եւ թողութիւն տո՛ւր մեր մեղքերին:
Արժանավորի՛ր Քեզ գոհությամբ փառավորել Որդուդ հետ եւ Սուրբ Հոգուդ հետ.
այժմ եւ միշտ եւ հավիտյան. ամեն:

Խոստովանում եմ Աստծու եւ սրբուհի Աստվածածնի առաջ եւ բոլոր սրբերի առաջ
եւ ձեր առաջ հայրեր եւ եղբայրներ, բոլոր մեղքերս, որ գործել եմ, քանի որ մեղանչե-
ցի խորհրդով, խոսքով եւ գործով, եւ բոլոր մեղքերով, որ մարդիկ գործում են: Սեղա,
մեղա: Աղաչում եմ ձեզ խնդրեք Աստծուց թողութիւն ինձ համար:

Ժամօրհնող- Թո՛ղ ողորմի քեզ հզոր Աստված եւ քո բոլոր մեղքերին թողութիւն
շնորհի՛՝ անցյալում եւ ներկայում, եւսպագայում թո՛ղ փրկի եւ հաստատի բոլոր բա-
րի գործերի մեջ: Եվ հանգստութիւն շնորհի քեզ հանդերձյալ կյանքում: Ամեն:

Քահանա- Թող մարդասեր Աստված ազատի ձեզ, եւ թողութիւն տա ձեր բոլոր մեղ-
քերին, ժամանակ տա սպաշխարելու եւ բարիք գործելու, Հզորը եւ Ողորմածը Սուրբ
Հոգու շնորհներով ուղղի ձեր առաջիկա կյանքը եւ փառք Նրան հավիտյան: Ամեն:
Դպիքներ եւ ժողովուրդ- Հիշի՛ր եւ մեզ Աստծու անմահ Գառի առջեւ:

Քահանա- Հիշյալ լինեք Աստծու անմահ Գառի առջեւ:

Նախամուտ - Առաջին սաղմոս մտից (ԴԹ)

(ի ձայն)

Աղաղակեցէ՛ք առ Տէր ամենայն երկիր, ծառայեցէ՛ք Տեառն ուրախութեամբ:

Մտէ՛ք առաջի նորա ցնծութեամբ. ծաներու՛ք զի նա է Տէր Աստուած մեր:

Նա արար զմեզ, եւ ոչ մեք էաք. մեք ժողովուրդք եւ խաշն արօտի նորա:

Մտէ՛ք ընդ դրունս նորա խոստովանութեամբ, եւ օրհնութեամբ ի յարկս նորա:

Խոստովան եղերո՛ւք Տեառն, եւ օրհնեցէ՛ք զանուն նորա:

Քաղցր է Տէր, յաիտեան է ողորմութիւն Նորա. յազգէ մինչեւ յազգ է ճշմարտութիւն
Նորա:

Փառք Հօր եւ Որդույ եւ Հոգւոյն Սրբոյ.

Այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտենից. ամեն:

Սարկաւագ-Սուրբ Եկեղեցեաւս աղաչեսցուք զՏէր՝ զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մե-
ղաց. եւ կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ, ամենակալ Տէր Աստուած մեր., կեցո՛
եւ ողորմեա՛:

Քահանայ- Ի մէջ տաճարիս եւ առաջի Աստուածընկալ եւ պայծառացեալ սուրբ
նշանացս եւ սուրբ տեղոյս խոնարհեալ երկխղիւ երկրպագանենք. գտորբ եւ զիրա-
շալի եւ զյաղթող զՅարութիւնդ (զՏէրութիւնդ) Քո փառաւորենք, եւ Քեզ մատուցա-
նենք զօրհնութիւն եւ զփառս ընդ Հօր եւ ընդ Հոգւոյդ Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաի-
տեանս յաիտենից. ամեն:

Քահանայ- Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ առ Աստուած, որ ուրախ առնէ զման-
կութիւն իմ:

Սարկաւագ-Դատ արա՛ ինձ Աստուած. եւ իրաւ արա ինձ ի դատաստանի իմում:

Քահանայ- Յազգէ որ ո՛չ է սուրբ, ի մարդոյ մեղաւորէ նենգաւորէ փրկեա՛ զիս:

Նախամուտ - Մուտքի առաջին սաղմուսը (ԲԹ)
(եղանակով)

Աղաղակե՛ք Տիրոջը ողջ երկրով մեկ, ուրախությամբ ծառայե՛ք Տիրոջը:
Յնծությամբ նրան ընդառաջ գնացե՛ք. ճանաչե՛ք, որովհետեւ նա է մեր Տեր Աստվա-
ծը:

Նա մեզ արարեց, եւոչ թե մենք եղանք. մենք ենք ժողովուրդը եւ նրա արոտի ոչխար-
ները:

Խոստովանությամբ մտե՛ք նրա դռներով. եւօրհնությամբ՝ նրա տուն:

Խոստովանեք Տիրոջը եւօրհնեցեք նրա անունը:

Քաղցր է Տերը, հավիտենական է նրա ողորմությունը, սերնդե սերունդ է նրա ճշմար-
տությունը:

Փառք Հորը եւՈրդուն եւ Սուրբ Հոգուն:

Այժմ եւ միշտ եւ հավիտյանս. ամեն:

Սարկավագ- Սուրբ Եկեղեցիով աղաչենք Տիրոջը, որպեսզի մեզ սրանով մեղքերից
փրկի. եւ պահպանի իր ողորմության շնորհիվ. ամենակարող Տեր Աստված մեր.
ապրեցրո՛ւ եւողորմի՛ր:

Քահանա- Աստվածընկալ ու պայծառացյալ այս սուրբ նշանների առաջ, սուրբ տե-
ղի առաջ, խոնարհվելով, երկյուղով երկրպագում ենք: Սուրբ եւ հրաշալի եւ հաղթող
Քո Հարությունն (Տերությունը) ենք փառավորում, եւ Քեզ ենք նվիրաբերում օրհնու-
թյունները եւ փառքերը՝ Հոր եւ Սուրբ Հոգու հետ. այժմ եւ միշտ եւ հավիտյանս.
ամեն:

Քահանա- Մտնելու եմ Աստծու սեղանի առջեւ՝ առ Աստված, որ ուրախ դարձնի իմ
մանկությունը:

Սարկավագ- Դատի՛ր ինձ, Աստվա՛ծ, եւիրավացի դարձրու ինձ իմ դատաստանի
մեջ:

Քահանա- Փրկի՛ր ինձ ազգից, որ սուրբ չէ եւ նենգավոր, մեղավոր մարդուց փրկի՛ր
ինձ:

Սարկաւագ- Դու Աստուած հզօրիչ իմ ես. ընդէ՞ր մոռացար զիս, ընդէ՞ր տրտում
գնամ ես ի նեղել թշնամոյ իմոյ:

Քահանայ- Առաքեա՛, Տէ՛ր, զլոյս Քո եւ զճմարտութիւն Քո. զի առաջնորդեսցեն
ինձ, եւ հանցեն զիս ի լեռն սուրբ եւ ի յարկս Քո:

Սարկաւագ- Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ առ Աստուած, որ ուրախ առնէ
զմանկութիւն իմ:

Քահանայ- Խոստովան եղէց քեզ օրհնութեամբ Աստուած, Աստուած իմ:

Սարկաւագ- Արդ՝ ընդէ՞ր տրտում ես, անձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս, յուսա՛ առ
Աստուած, խոստովանեա՛ նմա, փրկիչ երեսաց իմոց Աստուած է:

Քահանայ- Փառք Հօր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ.

Սարկաւագ- Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն: Եւ եւս խաղաղութեան,
զՏէր աղաչեսցուք:

Օրհնեսցուք զԱմենակալն Աստուած՝ զՀայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. որ
արժանի արար զմեզ կալ ի տեղուջս փառաբանութեան եւ երգել զերգս հոգեւորս.

Ամենակալ Տէր Աստուած մեր կեցո՛ւ եւ ողորմեա՛:

Քահանայ- Ի յարկի սրբութեան եւ ի տեղուջս փառաբանութեան, հրեշտակաց բնա-
կարանիս եւ մարդկան քաւարանիս. առաջի Աստուածընկալ եւ պայծառացեալ
սուրբ նշանացս եւ սուրբ տեղոյս՝ խոնարհեալ երկիւղի երկիրպագանեմք. զսուրբ

եւ գիրաշալի եւ գյաղթող զՅարութիւնդ (կամ Տէրութիւնդ) Քո օրհները եւ փառաւորեմք. եւ Քեզ ընդ երկնային զօրսն մատուցանեմք զօրհնութիւն եւ զփառս ընդ Հօր եւ ընդ Հոգւոյդ Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Սարկաւագ- Օրհնեա՛, Տէ՛ր:

Քահանայ- Օրհնեալ թագաւորութիւնն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Սարկավագ-Դու, իմ Աստված, որ ինձ հզորացնում ես, ինչո՞ւ մոռացար ինձ, ինչո՞ւ ես տրտում գնամ՝ իմ թշնամիներից հալածված:

Քահանայ- Ուղարկի՛ր, Տէ՛ր, Քո լույսը եւ ճշմարտությունը, որպէսզի առաջնորդեն ինձ եւ հանեն ինձ Քո սուրբ լեռը եւ Քո բնակարանները:

Սարկավագ- Մտնելու եմ Աստծու սեղանի առջեւ՝ առ Աստված, որ ուրախ դարձնի իմ մանկությունը:

Քահանայ- Խոստովանում եմ Քեզ օրհնությամբ Աստվա՛ծ, Աստվա՛ծ ի՛նձ:

Սարկավագ- Արդ, ինչու ես տխուր, ով իմ անձ կամ ինչու ես խռովում ինձ, Աստծուն ապավինի՛ր, խոստովանի՛ր նրան. իմ փրկիչը Աստված է:

Քահանայ- Փառք Հորը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն:

Սարկավագ- Այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից ամեն: Դարձեալ խաղաղության համար, աղաչում ենք Տիրոջը:

Օրհները ամենակարող Աստծուն՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հորը, որ արժանի դարձրեց մեզ կանգնել փառաբանության այս տեղում եւ երգել հոգեւոր երգեր, Ամենակարող Տեր Աստված մեր, ապրեցրո՛ւ եւ ողորմի՛ր:

Քահանայ- Սուրբ հարկում եւ փառաբանության տեղում. հրեշտակների բնակարանում եւ մարդկանց քավարանում, աստվածընկալ եւ պայծառացյալ սուրբ նշանների եւ սուրբ սեղանի առջեւ խոնարհված, երկյուղով երկրպագում ենք սուրբ, հրաշալի եւ հաղթող Հարությունդ (կամ Տէրությունդ), օրհնում եւ փառավորում եւ երկնային գորքերի հետ քեզ փառք ու օրհնություն ենք մատուցում, այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից, ամեն:

Սարկավագ- Օրհնի՛ր Տեր:

Քահանայ- Օրհնյալ է թագավորությունը Հոր եւ Որդու եւ Սուրբ Հոգու, այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից: Ամեն:

Ժամանուտ

(Միաձին Որդի)

Միաձին որդի եւ Բանդ Աստուած, եւ անմահ էութիւն, որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհոյ Աստուածածնէն եւ ի միշտ Կուսէն:

Անփոփոխելիդ մարդ եղեալ՝ խաչեցար Քրիստոս Աստուած մեր. մահուամբ զմահ կոխեցեր. մինդ ի Սրբոյ Երրորդութենէն՝ փառաւորակից ընդ Հօր եւ Սրբոյ Հոգւոյն, կեցո՛ւ զմեզ:

Սարկաւագ- Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք, ընկա՛լ, կեցո՛ւ եւ ողորմեա՛.

Օրհնեա՛, Տէր:

Քահանայ - Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

եւ Խաղաղութիւն ամենեցուն:

Դպիրք եւ Ժողովուրդ- Եւ ընդ հոգւոյդ քում:

Սարկաւագ- Աստուծոյ երկրպագեսցուք:

Դպիրներ եւ ժողովուրդ- Առաջի Քո, Տեր:

(ի ձայն)

Քահանայ - Տեր Աստուած մեր՝ որոյ կարողութիւնդ անքննին է եւ փառքդ անհասանելի: Որոյ ողորմութիւնդ անչափ է. եւ գթութիւնդ անբաւ: Դու ըստ առատ մարդասիրութեանդ Քում, նայեա՛ց ի ժողովուրդս Քո՝ եւ ի տաճարս յայս սուրբ: Եւ արա ընդ մեզ եւ ընդ աղօթակիցս մեր՝ առատապէս զողորմութիւն Քո եւ զգթութիւն. զի Քեզ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ճաշու մուտք, շարական յաւուր պատշաճի

Քահանայ- Չի քո է կարողութիւն, եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. Ամէն:

Սարկաւագ- Պոռսխումէ:

Դպիրք եւ ժողովուրդ- Սուրբ Աստուած, Սուրբ եւ հզօր, Սուրբ եւ անմահ, որ խաչեցար վասն մեր, (կամ յարեար ի մեռելոց), ողորմեա՛ մեզ (երիցս կրկնեա՛):

Ժամամուտ

(Միաժին Որդի)

Միաժին Որդի եւ Բանդ Աստված եւանմահ էութիւն, որ հանձն առար մարմնանալ միշտ կույս սուրբ Աստվածածնից:

Անփոփոխելի մարդ դառնալով խաչվեցիր, Քրիստոս Աստված մեր, մահով մահին հաղթեցիր. Դու, որ մեկն ես Սուրբ Երրորդութիւնից՝ փառավորակից Հորը եւ Սուրբ Հոգուն՝ ապրեցրո՛ւ մեզ:

Սարկավագ- Դարձյալ խաղաղության համար աղաչենք Տիրոջը, ընդունի՛ր, ապրեցրո՛ւ ետղորմի՛ր, օրհնի՛ր, Տեր:

Քահանա-Օրհնություն եւ Փառք Հորը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն: Այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից ամէն:

եւ Խաղաղություն ամենքին:

Դպիրներ եւ ժողովուրդ- Եվ քո հոգու հետ:

Սարկավագ-Երկրպագենք Աստծուն:

Դպիրներ եւ ժողովուրդ- Քո առաջ, Տեր:

(եղանակով)

Քահանա- Մեր Տեր Աստված, անքննելի է քո կարողությունը եւ փառքդ անհասանելի է: Ողորմությունդ անչափ է եւ գթությունդ՝ անբաւ: Դու ըստ Քո առատ մարդասիրության, նայիր Քո ժողովրդին եւ այս սուրբ տաճարին: Եվ շնորհիր առատապէս մեզ եւ մեր աղօթակիցներին Քո ողորմությունը եւ գթությունը, քանզի Քեզ վայել է փառք, իշխանություն եւ պատիվ, այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից ամէն:

Ճաշու մուտք, շարական հավուր պատշաճի

Քահանա- Որովհետեւ քոնն է կարողությունը եւ զօրությունը եւ փառքը, հավիտյանս ամէն:

Սարկավագ- Պոռսխումէ:

Դպիրներ եւ ժողովուրդ- Սուրբ Աստված, Սուրբ եւ հզօր, Սուրբ եւ անմահ, որ խաչվեցիր մեզ համար, (կամ հարություն առար մեռյալներից), ողորմիր մեզ (երեք անգամ):

Սարկաւագ- Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Դպիրք եւ ժողովուրդ- Տէ՛ր, ողորմեա՛:

Սարկաւագ- Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի եւ հաստատութեան սրբոյ եկեղեցոյ, զՏէր աղաչեսցուք:

Դպիրք եւ ժողովուրդ- Տէ՛ր, ողորմեա՛:

Սարկաւագ- Վասն ամենայն սուրբ եւ ուղղափառ եպիսկոպոսաց, զՏէր աղաչեսցուք:

Դպիրք եւ ժողովուրդ- Տէ՛ր, ողորմեա՛:

Սարկաւագ - Վասն հայրապետին մերոյ Տեառն Տեառն Գարեգին Սրբազնագոյն Կաթողիկոսի կենաց եւ փրկութեան հոգոյ նորին, զՏէր աղաչեսցուք:

Դպիրք եւ ժողովուրդ- Տէ՛ր, ողորմեա՛:

Սարկաւագ - Վասն վարդապետաց, քահանայից, սարկաւագաց, դպրաց եւ ամենայն ուխտի մանկանց եկեղեցոյ զՏէր աղաչեսցուք:

Դպիրք եւ ժողովուրդ- Տէ՛ր, ողորմեա՛:

Սարկաւագ- Վասն բարեպաշտ թագաւորաց եւ աստուածաւեր իշխանաց, զօրավարաց եւ զօրաց նոցին, զՏէր աղաչեսցուք:

Դպիրք եւ ժողովուրդ- Տէ՛ր, ողորմեա՛:

Սարկաւագ- Վասն հոգւոցելոց, որք ճշմարիտ եւ ուղիղ հաւատով ի Քրիստոս ննջեցին, զՏէր աղաչեսցուք:

Եւ եւս միաբան վասն ճշմարիտ եւ սուրբ հաւատոյս մերոյ, զՏէր աղաչեսցուք:

Զանձինս մեր եւ զմիմեանս Տեառն Աստուծոյ Ամենակալին յանձն արասցուք:

Ողորմեա՛ց մեզ, Տէր Աստուած մեր, ըստ մեծի ողորմութեան Քում, ասասցուք ամենեքեան միաբանութեամբ:

Դպիրք եւ ժողովուրդ- Տէ՛ր, ողորմեա՛, Տէ՛ր, ողորմեա՛, Տէ՛ր, ողորմեա՛:

Քահանայ- Զի ողորմած եւ մարդասէր եւ Աստուած գոլով, եւ Քեզ վայելէ փառք՝ իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն:

Ճաշու ընթերցուածք

Սարկաւագ-Յոթի:

Սարկավագ- Եվ Տիրոջը նաեւ խաղաղության համար ենք աղաչում:

Դպիրներ եւ ժողովուրդ-Ողորմի՛ր, Տե՛ր:

Սարկավագ- Ամբողջ աշխարհի խաղաղության եւ սուրբ եկեղեցու հաստատության համար աղաչում ենք Տիրոջը:

Դպիրներ եւ ժողովուրդ-Ողորմի՛ր, Տե՛ր:

Սարկավագ- Բոլոր սուրբ եւ ուղղափառ եպիսկոպոսների համար ենք աղաչում Տիրոջը:

Դպիրներ եւ ժողովուրդ-Ողորմի՛ր, Տե՛ր:

Սարկավագ- Մեր Հայրապետի՝ Տեր, Տեր Գարեգին Սրբազնագոյն Կաթողիկոսի կյանքի եւ նրա հոգու փրկության համար աղաչում ենք Տիրոջը:

Դպիրներ եւ ժողովուրդ-Ողորմի՛ր, Տե՛ր:

Սարկավագ- Վարդապետների, քահանաների, սարկավագների, դպիրների եւ եկեղեցու ուխտի բոլոր մանուկների համար աղաչում ենք, Տեր:

Դպիրներ եւ ժողովուրդ-Ողորմի՛ր, Տե՛ր:

Սարկավագ- Բարեպաշտ թագավորների եւ աստվածաւեր իշխանների, զօրավարների եւ նրանց զորքերի համար աղաչում ենք Տիրոջը:

Դպիրներ եւ ժողովուրդ-Ողորմի՛ր, Տե՛ր:

Սարկավագ- Հանգուցյալների հոգիների համար, որոնք ճշմարիտ եւ ուղիղ հավատով ի Քրիստոս ննջեցին, աղաչում ենք Տիրոջը:

Նաեւ միաբանված մեր ճշմարիտ եւ սուրբ հավատի համար, աղաչում ենք Տիրոջը:

Մեր անձերը եւ միմյանց մեր Տեր Աստուծոն ենք հանձնում:

Ողորմի՛ր մեզ, Տեր Աստված մեր, ըստ Քո մեծ ողորմության, ասենք բոլորս միաբանությամբ:

Դպիրներ եւ ժողովուրդ-Ողորմի՛ր, Տե՛ր, ողորմի՛ր, Տե՛ր, ողորմի՛ր, Տե՛ր:

Քահանա- Քանի որ ողորմած եւ մարդասեր եւ Աստված, եւ քեզ վայել է փառք, իշխանություն եւ պատիվ, այժմ եւ միշտ եւ հավիտյանս. ամեն:

Ճաշու ընթերցումը

Սարկավագ-Օրթի:

Քահանայ-եւ Խաղաղութիւն ամենեցուն:

Դպիրներ եւ ժողովուրդ-Եւ ընդ հոգւոյդ քում:

Սարկավագ-Երկիւղածութեամբ լուարուք: Սրբոյ Աւետարանիս որ ըստ...:

Դպիրներ եւ ժողովուրդ-Փառք քեզ Տեր Աստուած մեր:

Սարկավագ-Պռոսփումէ:

պիրներ եւ ժողովուրդ-Ասէ Աստուած:

Նիկիական հանգանակ

Հաւատամք ի մի Աստուած, ի Հայրն ամենակալ, յարարիչն երկնի եւ երկրի, երեսելեաց եւ աներեւոյթից:

Եւ ի մի Տեր Յիսուս Քրիստոս, յՈրդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ միածին, այսինքն յեութենէ Հօր: Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ, ծնունդ եւ ոչ արարած. նոյն ինքն ի բնութենէ Հօր, որով ամենայն ինչ եղեւ յերկինս եւ ի վերայ երկրի, երեսելիք եւ աներեւոյթք:

Որ յաղագս մեր՝ մարդկան եւ վասն մերոյ փրկութեան իջեալ ի յերկնից մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Սարիսմայ սրբոյ Կուսէն Հոգւովն Սրբով: Որով էառ մարմին, հոգի եւ միտ եւ զամենայն որ ինչ է ի մարդ, ճշմարտապէս եւ ոչ կարծեօք:

Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ ատուր յարուցեալ.ելեալ ի յերկինս նովին մարմնովն, նստաւ ընդ աջմէ Հօր: Գալոց է նովին մարմնովն եւ փառօք Հօր ի դատել զկենդանիս եւ զմեռեալս. որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան:

Հաւատամք եւ ի Սուրբ Հոգին, յանեղն եւ ի կատարեալն. որ խօսեցաւ յօրէնս եւ ի մարգարէս եւ յԱւետարանս: Որ էջն ի Յորդանան, քարոզեաց յառաքեալսն եւ բնակեցաւ ի սուրբսն:

Հաւատամք եւ ի մի միայն ընդհանրական եւ առաքելական սուրբ Եկեղեցի: Ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց: Ի յարութիւն մեռելոց. ի դատաստանն յաւիտենից հոգւոց եւ մարմնոց. յարքայութիւնն երկնից եւ ի կեանսն յաւիտենականսն:

Քահանա-եւ Խաղաղություն ամենքին:

Դպիրներ եւ ժողովուրդ-Եվ քո հոգուդ հետ:

Սարկավագ-Երկյուղածությամբ լսեցե՛ք: Սուրբ Աւետարանից, որ ըստ...:

Դպիրներ եւ ժողովուրդ-Փառք քեզ Տեր Աստված մեր:

Սարկավագ-Պռոսխումն:

պիրներ եւ ժողովուրդ-Ասում է Աստված:

Նիկիական հանգանակ

Հավատում ենք մի Աստծու, ամենակալ Հորը, երկնքի եւերկրի, երեւելիների եւաներեւույթների Արարչին:

Եվ մի Տէր Հիսուս Քրիստոսին, Աստծու Որդուն, ծնված Հայր Աստծուց, միածին, այսինքն՝ Հոր էութունից: Աստված՝ Աստծուց, լույս՝ լույսից, ճշմարիտ Աստված՝ ճշմարիտ Աստծուց, ծնունդ եւոչ արարած՝ նույն ինքը Հոր բնութունից, որով եղավ ամեն ինչ երկնքում եւերկրի վրա, երեւելիներ եւաներեւույթներ: Որ մեզ՝ մարդկանց համար եւ մեր փրկության համար իջնելով երկնքից՝ մարմնացավ, մարդացավ, կատարելապէս ծնվեց սուրբ Կույս Մարիամից՝ Սուրբ Հոգով: Որով առավ մարմին, հոգի եւ միտք եւամեն ինչ որ ունի մարդը՝ ճշմարտապէս եւոչ կարծեցյալ: Չարչարվեց, խաչվեց, թաղվեց, երրորդ օրը հարություն առավ, ելավ երկինք նույն մարմնով, նստեց Հոր աջ կողմում: Գալու է նույն մարմնով եւ Հոր փառքով՝ դատելու ողջերին եւ մեռյալներին, որի թագավորությանը չկա վախճան:

Հավատում ենք եւ Սուրբ Հոգուն՝ անեղին եւ կատարյալին, որ խոսեց օրենքի, մարգարեների մեջ եւ Ավետարաններում: Որ իջավ Հորդանան, քարոզեց առաքյալների միջոցով եւ բնակվեց սրբերի մեջ:

Հավատում ենք եւ միայն մի՝ ընդհանրական եւառաքելական սուրբ Եկեղեցուն: Մի մկրտության, ապաշխարության, մեղքերի քավության ու թողության: Մեռյալների հարությանը, հոգիների եւ մարմինների հավիտյան դատաստանին, երկնքի արքայությանը եւ հավիտենական կյանքին:

Իսկ որք ասենն՝ էր երբեմն յորժամ ո՛չ էր Որդին. կամ էր երբեմն յորժամ ո՛չ էր Սուրբ Հոգին. կամ թէ յոչէից եղեն, կամ յայլմէ էութենէ ասեն լինել զՈրդին Աստուծոյ եւ կամ զՍուրբ Հոգին. եւ թէ փոփոխելիք են կամ այլայլելիք, գայնալիսիսն նգովէ կաթողիկէ եւ առաքելական սուրբ Եկեղեցի:

Ի սրբոյ Լուսաւորչէն մերմէ ասացեալ

Քահանայ- Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան գյաւիտեանս, երկրպագանելով Սրբոյ Երրորդութեանն եւ Միոյ Աստուածութեանն Հօր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Սարկաւագ- Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Եւ եւս հաւատով աղաչեսցուք եւ խնդրեսցուք ի Տեառնէ Աստուծոյ եւ ի Փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ ի ժամուս պաշտաման եւ աղօթից: Չի արժանի ընդունելութեան արասցէ լուիցէ Տէր ձայնի աղաչանաց մերոց: Ընկալցի զխնդրուածս սրտից մերոց. թողցէ գյանցանս մեր ողորմեսցի ի վերայ մեր: Աղօթք մեր եւ խնդրուածք յամենայն ժամ մտցեն առաջի մեծի տէրութեան նորա: Եւ Նա տացէ մեզ միաբան միով հաւատով եւ արդարութեամբ վաստակիլ ի գործս բարիս: Չի գողորմութեան զշնորհսն իւր արասցէ ի վերայ մեր. Տէրն ամենակալ. կեցուցէ եւ ողորմեսցի:

Դպիրք եւ ժողովուրդ- Կեցո՛, Տէ՛ր:

Սարկաւագ- Չժամ սուրբ պատարագիս եւ գառաջիկայ օրս խաղաղութեամբ անցուցանել ի Տեառնէ խնդրեսցուք:

Դպիրք եւ ժողովուրդ- Շնորհեա՛, Տէ՛ր:

Սարկաւագ- Չհրեշտակ խաղաղութեան պահապան անձանց մերոց ի տեառնէ խնդրեսցուք:

Դպիրք եւ ժողովուրդ- Շնորհեա', Տէ'ր:

Սարկաւագ- Չքաւութիւն եւ գթողութիւն յանցանաց մերոց, ի Տեառնէ խնդրեսցուք:

Դպիրք եւ ժողովուրդ- Շնորհեա', Տէ'ր:

Սարկաւագ- Չարոյ Խաչին մեծ եւ կարող գորութիւնն յօգնութիւն անձանց մերոց ի Տեառնէ խնդրեսցուք:

Դպիրք եւ ժողովուրդ- Շնորհեա', Տէ'ր:

Իսկ ովքեր ասում են՝ թե կար ժամանակ, երբ չկա'ր Որդին եւ կամ թե կար ժամանակ, երբ չկա'ր Սուրբ Հոգին կամ թե ոչնչից գոյացան կամ ասում են Աստծու Որդին եւ կամ Սուրբ Հոգին այլ էութիւնից են եւ թե փոփոխելի են կամ այլայլելի, այդպիսիներին նգովում է ընդհանրական եւառաքելական սուրբ Եկեղեցին:

Մեր սուրբ Լուսավորչի կողմից ասվնծ.

Քահանա- Իսկ մենք փառավորում ենք նրան, ով հավիտենությունից առաջ էր՝ երկրպագելով Սուրբ Երրորդությանն ու մի Աստվածությանը՝ Հորը, Որդուն եւ Սուրբ Հոգուն, այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից. ամեն:

Սարկավագ- Նորից խաղաղության համար աղաչում ենք Տիրոջը:

Հավատով աղաչում ենք եւ խնդրում ենք Տեր Աստծուց եւ մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսից պաշտամունքի եւ աղոթքի այս ժամին, որպեսզի ընդունելության արժանի անի, լսի Տերը մեր աղաչանքների ձայնը: Ընդունի մեր սրտի խնդրանքները, թողություն տա մեր հանցանքներին (մեղքերը), ողորմի մեզ: Մեր աղոթքները եւ խնդրանքները թող ամեն ժամ բարձրանան նրա մեծ տերության առաջ: Որպեսզի իր ողորմության շնորհները մեզ վրա իջեցնի, ամենակալ Տերը թող ապրեցնի ետղորմի:

Դպիրներ եւ ժողովուրդ-Ապրեցրո՛ւ, Տէ'ր:

Սարկավագ- Տիրոջից խնդրում ենք Սուրբ պատարագի ժամը եւառաջիկա օրը խաղաղությամբ անցկացնել:

Դպիրներ եւ ժողովուրդ - Շնորհի'ր, Տէ'ր:

Սարկավագ- Տիրոջից խնդրում ենք մեզ պահապան խաղաղության հրեշտակ:

Դպիրներ եւ ժողովուրդ- Շնորհի'ր, Տէ'ր:

Սարկավագ- Տիրոջից խնդրում ենք մեր մեղքերի քավություն եւ թողություն:

Դպիրներ եւ ժողովուրդ- Շնորհի'ր, Տէ'ր:

Սարկավագ- Տիրոջից խնդրում ենք Սուրբ Խաչի մեծ եւ կարող գորությունը մեզ օգնական:

Դպիրներ եւ ժողովուրդ- Շնորհի'ր, Տէ'ր:

Սարկաւագ- Եւ եւս միաբան վասն ճշմարիտ եւ սուրբ հաւատոյս մերոյ, գՏէր աղաչեսցուք:

Դպիրք եւ ժողովուրդ- Տէ'ր ողորմեա':

Սարկաւագ- Չանձինս մեր եւ զմիմեանս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցո՛ւք:

Դպիրք եւ ժողովուրդ- Քեզ Տեառնդ յանձն եղիցուք:

Սարկաւագ- Ողորմեաց մեզ Տէր Աստուած մեր, ըստ մեծի ողորմութեան քում. ասասցուք ամենեքեան միաբանութեամբ:

Դպիրք եւ ժողովուրդ- Տէ'ր ողորմեա', Տէ'ր ողորմեա', Տէ'ր ողորմեա':

Աղօթք զկնի ընթերցուածոց

Քահանայ- (ձայնի) Որպես զի արժանաւորք եղիցուք գոհութեամբ փառաւորել զՔեզ ընդ Հօր եւ Սուրբ Հոգւոյդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն: Եւ Խաղաղութիւն ամենեցուն:

Դպիրք եւ ժողովուրդ- Եւ ընդ հոգւոյդ քում:

Սարկաւագ- Աստուծոյ երկրպագեսցուք:

Դպիրք եւ ժողովուրդ- Առաջի Քո, Տէ'ր:

Քահանայ- (ձայնի) Խաղաղութեամբ քով Քրիստոս Փրկիչ մեր՝ որ ի վե'ր է քան զամենայն միտս եւ զբանս: Ամբասցո՛ր զմեզ եւ աներկիւղ պահեա՛ր յամենայն չարէ: Հաւասարեա՛ր զմեզ ընդ ճշմարիտ երկրպագուս Քո, որք հոգւով եւ ճշմարտութեամբ Քեզ երկիրպագանեն: Վասնզի ամենասուրբ Երրորդութեանդ վայել են փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից:

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. Ամէն:

Սարկաւագ- Օրհնեա՛ր, Տէ'ր:

Քահանայ- Տէր Աստուած օրհնեսցէ զամենեսեան:

Դպիրք եւ ժողովուրդ- Ամէն:

Սարկավագ- Դարձյալ աղաչում ենք Տիրոջը միաբան՝ մեր ճշմարիտ եւ սուրբ հավատի համար:

Դպիրներ եւ ժողովուրդ- Ողորմի՛ր, Տե'ր:

Սարկավագ - Մեր անձերը եւ միմյանց Ամենակալ Տեր Աստծուն հանձնենք:

Դպիրներ եւ ժողովուրդ- Քեզ՝ Տիրոջը ենք հանձնվում:

Սարկավագ- Ողորմի՛ր մեզ, մեր Տեր Աստված՝ քո մեծ ողորմությամբ, միաբանությամբ ասենք ամենքս միասին. Ողորմի՛ր Տե'ր, ողորմի՛ր Տե'ր, ողորմի՛ր Տե'ր:

Աղոթք ընթերցումներից հետո

Քահանա- (ձայնով) Որպեսզի արժանաի լինենք գոհությամբ փառավորել Քեզ Հոր եւ Սուրբ Հոգուդ հետ. այժմ եւ միշտ հավիտյանս հավիտենից. ամէն:

Եւ Խաղաղութիւն բոլորին:

Դպիրներ եւ ժողովուրդ- Եվ քո հոգու հետ:

Սարկավագ- Աստծուն երկրպագեք:

Դպիրներ եւ ժողովուրդ- Քո առջեւ, Տե'ր:

Քահանա- (եղանակով) Քո խաղաղությամբ, Քրիստոս, մեր Փրկիչ, որ վեր է ամեն մտքից եւ խոսքից: Պահպանի՛ր մեզ եւ պահի՛ր աներկյուղ ամեն չարից:

Հավասարեցրո՛ւ մեզ Քո ճշմարիտ երկրպագողներին, որոնք հոգով եւ ճշմարտությամբ քեզ են երկրպագում, որովհետեւ ամենասուրբ Երրորդութեանդ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից:

Օրհնյալ մեր Տեր Հիսուս Քրիստոս. ամէն:

Սարկավագ- Օրհնի՛ր, Տէր:

Քահանա- Թող Տեր Աստված օրհնի՛ր բոլորին:

Դպիրներ եւ ժողովուրդ- Ամէն:

ԿԱՆՈՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ

Վերաբերութիւն

Սարկաւագ- Մի որ յերախայից, մի որ ի թերահաւատից եւ մի որ յապաշխարողաց եւ յանմաքրից մերձեացի յաստուածային խորհուրդս:

Դ-պիրք եւ ժողովուրդ- Մարմին տէրունական եւ արիւն Փրկչական կայ առաջի. երկնային զօրութիւնքն յաներեւոյթս երզեն եւ ասեն անհանգիստ բարբառով՝ Սուրբ.

Սուրբ. Սուրբ Տէր զօրութեանց:

Սարկաւագ- Սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ մերում դպիրք ձայնի քաղցրութեամբ զերգս հոգեւորս:

Համբարձէ՛ք, իշխանք, զդրունս ձեր ի վեր, համբարձցին դրունք յաւիտենից եւ մտցէ թագաւոր փառաց:

Քահանայ- Ո՞վ է Սա, Թագաւոր փառաց, Տէր, հզօր զօրութեամբ Իւրով, Տէր կարող ի պատերազմի:

Սարկաւագ- Համբարձէ՛ք, իշխանք, զդրունս ձեր ի վեր, համբարձցին դրունք յաւիտենից եւ մտցէ Թագաւոր փառաց:

Քահանայ- Ո՞վ է Սա, Թագաւոր փառաց եւ Տէր զօրութեանց:

Սարկաւագ- Սա Ինքն է Թագաւոր փառաց:

Քահանայ- եւՅրհնեալ եկեալ անուամբ Տեառն:

Սարկավագ- Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Դ-պիրք եւ ժողովուրդ- Տէր ողորմեա՛:

Սարկաւագ- Եւ եւս հաւատով եւ սրբութեամբ կացցուք յաղօթս առաջի սրբոյ Սեղանոյս Աստուծոյ ահիւ: Մի՛ խղճիւ եւ գայթակղութեամբ. մի՛ նենգութեամբ, խորամանկութեամբ. մի՛ պատրանօք եւ խաբէութեամբ: Մի՛ երկմտութեամբ եւ մի՛ թերահաւատութեամբ, այլ ուղիղ վարուք, պարզ մտօք, միամիտ սրտիւ, կատարեալ հաւատով, լցեալ սիրով լի եւ առաւելեալ ամենայն գործովք բարութեան կացցուք յաղօթս առաջի սրբոյ սեղանոյս Աստուծոյ եւ գտցուք զողորմութեան զշնոհս յաւուր յայտնութեան եւ ի միասնգամ գալստեան՝ Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի կեցուցէ եւ ողորմեսցի:

Դ-պիրք եւ ժողովուրդ- Կեցո՛ Տէր եւ ողորմեա՛:

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ ԿԱՆՈՆԸ

Վերաբերում

Սարկավագ- Երեխաներից ոչ որ, թերահավատներից ոչ որ եւսապաշխարողներից ոչ որ եւսանաքուրներից ոչ որ, թող չմոտենա աստվածային խորհրդին:

Դ-պիրներ եւ ժողովուրդ- Տիրոջ մարմին եւ Փրկչական արյուն կա մեր առջեւ. աներեւոյթ երկնային զորությունները երզում եւստում են անհանգիստ բարբառով՝

Սուրբ. Սուրբ. Սուրբ Տէր զորությունների:

Սարկավագ- Դ-պիրներ՛ր, մեր Տէր Աստուծուն սաղմոս ասեք հոգեւոր երգի քաղցր ձայնով:

Բարձրացրէ՛ք ձեր դռները, ո՞վ իշխաններ՛ր, թող վեր բարձրանան հավիտենականության դռները, որպէսզի մտնի փառքերի թագավորը:

Քահանա- Ո՞վ է այս փառքերի Թագավորը, Տէր՝ հզօր Իր զորությամբ, Տէր՝ կարող պատերազմի մեջ:

Սարկավագ- Բարձրացրէ՛ք ձեր դռները, ո՞վ իշխաններ՛ր, թող վեր բարձրանան հավիտենականության դռները, որպէսզի մտնի փառքերի թագավորը:

Քահանա- Ո՞վ է այս փառքերի Թագավորը, զորությունների Տէրը:

Սարկավագ- Սա Ինքն է՝ փառքերի Թագավորը:

Քահանա- եւՅրհնյալ է նա, որ եկել է Տիրոջ անվամբ:

Սարկավագ- Դարձյալ խաղաղության համար աղաչենք Տիրոջը:

Դպիրներ եւ ժողովուրդ- Ողորմի՛ր, Տե՛ր:

Սարկավագ- Աստծու սուրբ Սեղանի առջեւ առավել հավատով, սրբությամբ կանգնենք աղոթքի՝ ահով եւ ոչ թե խղճով եւ գայթակղությամբ, առանց նենգության, խորամանկության, առանց պատրանքների եւ խաբեության: Առանց երկմտության եւ թերահավատության, այլ ճշմարիտ վարքով, պարզ մտքով, միամիտ սրտով, կատարյալ հավատով, լի սիրով լցված եւ բարության գործերով լեցուն կանգնենք աղոթքի Աստծու սուրբ սեղանի առաջ եւ գտնեք ողորմության շնորհը մեր Տիրոջ եւ Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի, հայտնության եւ մյուս անգամ գալստյան օրը. թող Տերը ապրեցնի՛ եւ ողորմի՛:

Դպիրներ եւ ժողովուրդ- Ապրեցրո՛ւ եւ ողորմի՛ր, Տե՛ր:

Քահանայ- Շնորհօք եւ մարդասիրութեամբ Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի. ընդ որում քեզ Հօր՝ միանգամայն եւ Հոգւոյդ Սրբոյ, վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտենից: Ամէն:

Եւ Խաղաղութիւն ամենեցուն:

Դպիրք եւ ժողովուրդ- Եւ ընդ հոգւոյդ քում:

Սարկաւագ- Աստուծոյ երկրպագեսցուք:

Դպիրք եւ ժողովուրդ- Առաջի քո, Տէր:

Ողջոյն

Սարկաւագ- Ողջոյն տո՛ւք միմեանց ի համբոյր սրբութեան, եւ որք ոչ էք կարողք հաղորդիլ Աստուածային խորհրդոյս, առ դրունս ելէ՛ք, աղօթեցէ՛ք:

Դպիրք եւ ժողովուրդ-

Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ.

Որ էնն Աստուած աստ բազմեցաւ.

Խաղաղութեան ձայն հնչեցաւ.

Սուրբ ողջունի հրաման տուաւ:

Եկեղեցիս մի անձն եղեւ.

Համբոյրս յօդ լրման տուաւ.

Թշնամութիւնն հեռացաւ.

Մէրն յընդհանուրս սփռեցաւ:

Արդ պաշտօնեայք բարձեալ զձայն,

Տուք զօրհնութիւն ի մի բերան.

Միասնական Աստուածութեանն,

Որում սրովբէքն են սրբաբան:

Ոմանք եւ գայս ասեն ի հանդիսի Տօնի

Սարկաւագ- Որք հաւատով կայք յանդիման, Սուրբ սեղանոյս արքայական: Տեւէք բազմեալ զՔրիստոս արքայն. Եւ շուրջ պատեալ զօրք վերնական:

Դպիրք եւ ժողովուրդ- Վեր համբառնամք զաչս ունելով, եւ պաղատիմք գայս ասելով: Չմեղս մեր մի յիշեսցես, այլ գթութեամբ քո քաւեսցես: Ընդ հրեշտակացն օրհնենք զՔեզ, եւ ընդ սրբոց Քոց, Տէր, փառք Քեզ:

Քահանայ- Մեր Տիրոջ եւ Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի շնորհքով եւ մարդասիրությամբ.

Որի հետ նաեւ Քեզ՝ Հորդ, եւ նաեւ Սուրբ Հոգւոյ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիվ. այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից. ամեն:

Եւ Խաղաղութիւն բոլորին:

Դպիրք եւ ժողովուրդ- Քո հոգուդ հետ:
Սարկաւագ- Աստծուն երկրպագե՛ք:
Դպիրք եւ ժողովուրդ- Քո առաջ, Տէր:

Ողջուն

Սարկավագ- Ողջունեք միմյանց սրբության համբույրով եւնրանք, ովքեր չեն կարող հաղորդվել աստվածային խորհրդին թող դուրս գան եւ այնտեղ աղոթեն:

Դպիրներ եւ ժողովուրդ- Քրիստոս մեր մեջ հայտնվեց.

Է-ն Աստված այստեղ բազմեց.

Խաղաղության ձայն հնչեց.

Սուրբ ողջունի հրաման տրվեց:

Եկեղեցին մի անձ դարձավ.

Համբույրը միության կապ եղավ.

Թշնամությունը հեռացավ:

Մերը սփռվեց բոլորի վրա:

Արդ պաշտոնյաներ բարձրաձայն՝

Տվեք օրհնություն միաբերան.

Միասնական Աստվածությանը,

Որում սերովբեներն են սրբաբան:

Ոմանք տոնական հանդիսության ժամանակ ասում են նաեւ այս.

Սարկավագ- Ովքեր հավատով են, արքայական Սուրբ Սեղանի առջեւ: Տեսեք բազմած Քրիստոս արքային. շրջապատված երկնային զորքով:

Դպիրներ եւ ժողովուրդ- Վեր բարձրացնենք մեր աչքերը, եւ պաղատենք՝ այս ասելով. Մեր մեղքերը չհիշես, այլ ներիր գթությամբ: Հրեշտակների հետ եւ քո սրբերի հետ, օրհնում ենք քեզ, փառք Քեզ, Տէ՛ր:

Սարկաւագ- Ահի կացցուք, երկիւղի կացցուք, բարուք կացցուք եւ նայեցարուք զգուշութեամբ:

Դպիրք եւ ժողովուրդ- Առ Քեզ, Աստուած:

Սարկաւագ- Պատարագ Քրիստոս մատչի անարատ Գառն Աստուծոյ:

Դպիրք եւ ժողովուրդ- Ողորմութիւն եւ խաղաղութիւն եւ պատարագ օրհնութեան:

Քահանայ- Շնո՛րհք, Մէ՛ր եւ աստուածային սրբաբար զօրութիւնն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. եղիցի ընդ ձեզ ամենեսեանդ:

Դպիրք եւ ժողովուրդ- Ամէն: Եւ ընդ հոգւոյդ Քում:

Սարկաւագ- Չղբունս, գղբունս ամենայն իմաստութեամբ եւ զգուշութեամբ: Ի վեր ընծայեցուցէք զմիտս ձեր Աստուածային երկիւղի:

Դպիրք եւ ժողովուրդ- Ունիմք առ քեզ, Տէր ամենակալ:

Սարկաւագ- Եւ գոհացարուք զՏեառնէ բոլորով սրտի:

Դպիրք եւ ժողովուրդ- Արժան եւ իրաւ:

Քահանայ- Եւ ընդ սերովբէսն եւ ընդ քերովբէսն միաձայն սրբասացութեամբ յօրինել նուագս. եւ համարձակապէս գոչելով աղաղակել ընդ նոսին եւ ասել:

Գոհութիւն

Դպիրք եւ ժողովուրդ- Սուրբ, Սուրբ, Սուրբ Տէր զօրութեանց: Լի են երկինք եւ երկիր փառօք քոյ. օրհնութիւն ի բարձունս. օրհնեալ որ եկիր եւ գալոցդ ես անուամբ Տեառն. ովսաննա՛ ի բարձունս:

Քահանայ- Առե՛ք, կերե՛ք, Այս է Մարմին Իմ՝ որ վասն ձեր եւ բազմաց բաշխի ի քա-
տութիւն եւ ի թողութիւն մեղաց:

Դպիրք եւ ժողովուրդ- Ամէն:

Քահանայ- Արբե՛ք ի սմանէ ամենեքեան. Այս է Արիւն Իմ՝ Նորոյ Ուխտի, որ յաղա-
զս ձեր եւ բազմաց հեղանի ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց:

Սարկավագ- Ահով մնանք, երկյուղով մնանք, զգաստ մնանք եւ զգուշությամբ նա-
յենք:

Դպիրներ եւ ժողովուրդ- Դեպի Քեզ ենք նայում, Աստված:

Սարկավագ- Քրիստոս՝ Աստծու անարատ Գառը, պատարագ է մատուցվում:

Դպիրներ եւ ժողովուրդ- Ողորմություն եւ խաղաղություն եւ պատարագ օրհնության:
Քահանայ- Հոր, Որդու եւ Սուրբ Հոգու շնորհը, սերը եւ աստվածային սրբացնող զո-
րությունը թող լինի ձեզ՝ բոլորի հետ:

Դպիրներ եւ ժողովուրդ- Ամէն. եւ քո հոգու հետ:

Սարկավագ- Դռները, դռները ամենայն իմաստությամբ ու զգուշությամբ, դեպի վեր
ընծայեք ձեր մտքերը աստվածային երկյուղով:

Դպիրներ եւ ժողովուրդ- Ամենակալ Տէր, Քեզ են հառած մեր մտքերը:

Սարկավագ- Եվ գոհացեք Տիրոջից ամբողջ սրտով:

Դպիրներ եւ ժողովուրդ- Արժանի է եւ ճշմարիտ:

Քահանայ- Եվ սերովբեների ու քերովբեների հետ միաձայն սրբասացությամբ հորի-
նել երգեր եւ համարձակապես գոչելով աղաղակել նրանց հետ ու ասել:

Յիշատակն

Դպիրներ եւ ժողովուրդ- Սուրբ, Սուրբ, Սուրբ եւ Տէր Չորությունների: Երկինքն ու
երկիրը լի՛ են քո փառքերով: Օրհնություն բարձունքներում, օրհնյալ ես, որ եկար եւս
գալու եւ Տիրոջ անունով: Օվսաննա բարձունքներում:

Քահանայ- Առե՛ք, կերե՛ք այս է իմ Մարմինը, որը բաշխվում է ձեր եւ շատերի հա-
մար որպէս մեղքերի քավություն եւ թողություն:

Դպիրներ եւ ժողովուրդ- Ամէն:

Քահանայ- Բոլորդ խմեցե՛ք սրանից, այս է Նոր Ուխտի Իմ Արյունը, որ թափվում է
ձեր եւ շատերի համար, որպէս մեղքերի քավություն եւ թողություն:

Դպիրք եւ ժողովուրդ- Ամէն: Հայր երկնաւոր, որ զՌոդիդ Քո ետուր ի մահ վասն մեր
պարտապան պարտեաց մերոց, հեղմամբ Արեան Նորա, աղաչեմք գՔեզ, ողորմեա՛
Քո բանաւոր հօտի:

Քահանայ- Եւ զՔոյս ի Քոյոց՝ քեզ մատուցանեմք ըստ ամենայնի եւ յաղագս ամե-
նեցուն:

Դպիրք եւ ժողովուրդ- Յամենայնի օրհնեալ ես, Տէր, օրհնեմք գՔեզ, գովեմք գՔեզ,
գոհանամք գՔէն, աղաչեմք գՔեզ, Տէր Աստուած մեր:

Գոհություն

Քահանայ- եւ Խաղաղութիւն ամենեցուն:

Դպիրք եւ ժողովուրդ- Եւ ընդ հոգւոյդ քում:

Սարկաւագ- Աստուծոյ երկրպագեսցուք:

Դպիրք եւ ժողովուրդ- Առաջի քո Տէր: Որդի Աստուծոյ, որ պատարագեալ Հօր ի հաշտութիւն հաց կենաց բաշխիս ի մեզ, հեղմամբ Արեան Քո սուրբ՝ աղաչեմք գՔեզ ողորմեա՛ արեամբ Քով փրկեալ հօտի:

Քահանայ- Որպէս զի եղիցի սա ամենեցուն մեզ մերձեցելոցս, յանդատապարտութիւն, ի քառութիւն եւ ի թողութիւն մեղաց:

Հիշատակում

Դպիրք եւ ժողովուրդ- Հոգի Աստուծոյ որ զփառակցի քո զխորհուրդ իջեալ ի յերկնից կատարես ի ձեռն մեր, հեղմամբ Արեան Սորա աղաչեմք գՔեզ, հանգո՛ զհոգիս մեր ննջեցելոցն:

Քահանայ- Ընդ որս եւ մեզ այց արասցես բարերար Աստուած, աղաչեմք:

Դպիրք եւ ժողովուրդ- Յիշեա՛, Տէ՛ր, եւ ողորմեա՛:

Քահանայ- Աստուածածնին սրբոյ կուսին Մարիամու եւ Յովհաննու Սկրտչին, Ստեփաննոսի Նախավկային եւ ամենայն Սրբոց, եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք:

Դպիրք եւ ժողովուրդ- Յիշեա՛, Տէ՛ր եւ ողորմեա՛:

Դպիրներ եւ ժողովուրդ- Ամեն: Հայր երկնավոր, որ Քո Որդուն մահկան հանձնեցիր մեզ համար, որպէս մեր մեղքերի պարտապան: Նրա թափված արյամբ աղաչում ենք Քեզ, ողորմիր Քո բանավոր հոտին:

Քահանայ- Եվ Քոնր՝ Քեզանից, Քեզ ենք մատուցում ամեն կերպ եւ ամենքի համար:

Դպիրներ Ժողովուրդ- Ամեն ինչում օրինյալ ես, Տէր, օրհնում ենք Քեզ, գովում ենք քեզ եւ միշտ գոհանում ենք Քեզանից, աղաչում ենք քեզ, մեր Տէր Աստված:

Վերակոչում

Քահանայ- եւ Խաղաղություն ամենքին:

Դպիրներ Ժողովուրդ- Եվ քո հոգուն:

Սարկավագ- Աստծուն երկրպագեք:

Դպիրներ Ժողովուրդ- Քո առաջ, ով Տէր: Որդի Աստծու, որ մեր Հորը մեզ հետ հաշտեցնելու համար պատարագվելով, բաշխվում ես մեր մեջ որպէս կենաց հաց, աղաչում ենք Քեզ՝ Քո Սուրբ արյան հեղմամբ ողորմիր Քո արյամբ փրկված հոտին:

Քահանայ- Որպէսզի սա մեզ՝ բոլոր մոտեցողներինս համար լինի անդատապարտություն, մեղքերի քավություն եւ թողություն:

Յիշատակութիւնք

Սարկաւագ- Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Դպիրք եւ ժողովուրդ- Տէր ողորմեա՛:

Սարկաւագ- Ամենայն սրբովք, զորս յիշատակեցաք՝ եւս առաւելապէս զՏէր աղաչեսցուք:

Դպիրք եւ ժողովուրդ- Տէ՛ր, ողորմեա՛:

Սարկաւագ- Վասն մատուցեալ սուրբ եւ աստուածային անմահ պատարագիս՝ որ ի վերայ սրբոյ սեղանոյս, զՏէր աղաչեսցուք:

Դպիրք եւ ժողովուրդ- Տէ՛ր, ողորմեա՛:

Սարկաւագ- Որպէսզի Տէր Աստուած մեր, որ ընկալաւ զսա ի սուրբ, յերկնային եւ յիմանալի Իր մատուցարանն՝ զփոխանակն առաքեսցէ առ մեզ զՀնորիս եւ զպարգեւս Հոգւոյն Սրբոյ. զՏէր աղաչեսցուք:

Դպիրք եւ ժողովուրդ- Տէ՛ր ողորմեա՛:
Սարկաւագ- Ընկա՛լ, կեցո՛ւ եւ ողորմեա՛ եւ պահեա՛ զմեզ, Տէր Քոյին շնորհիւ:
Դպիրք եւ ժողովուրդ-Կեցո՛ւ Տէր, եւ ողորմեա՛:
Սարկաւագ- Չամենասրբուհի զԱստուածածինն զմիշտ Կոյսն Մարիամ, հանդերձ
ամենայն սրբովք յիշելով, զՏէր աղաչեսցուք:
Դպիրք եւ ժողովուրդ- Յիշեա՛ Տէ՛ր եւ ողորմեա՛:
Սարկաւագ- Եւ եւս միաբան վասն ճշմարիտ եւ սուրբ հաւատոյս մերոյ, զՏէր աղա-
չեսցուք:
Դպիրք եւ ժողովուրդ- Տէ՛ր ողորմեա՛:
Սարկաւագ- Չանձինս մեր եւ զմիմեանս Տեսոն Աստուծոյ Ամենակալին յանձն
արասցուք:
Դպիրք եւ ժողովուրդ- Քեզ՝ Տեսոնոյ յանձն եղիցուք:
Սարկաւագ- Ողորմեաց մեզ Տէր Աստուած մեր, ըստ մեծի ողորմութեան Քում.
ասասցուք ամենեքեան միաբանութեամբ:

Քահանա- Եվ մեր մեծ Աստծու եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի ողորմությունը թող լինի
ձեր եւամենքի հետ:
Դպիրներ եւ ժողովուրդ- Ամեն. եւ քո հոգու հետ:
Սարկավագ- Եվ խաղաղության համար եւսաղաչենք Տիրոջը:
Դպիրներ եւ ժողովուրդ- Տե՛ր, ողորմի՛ր:
Սարկավագ- Մեր հիշատակած բոլոր սրբերի հետ, առավել եւս Տիրոջն աղաչենք:
Դպիրներ եւ ժողովուրդ- Տե՛ր, ողորմի՛ր:
Սարկավագ- Մատուցված, սուրբ եւստովածային անմահ պատարագի համար, որ
սուրբ սեղանի վրա է, Տիրոջն աղաչենք:
Դպիրներ եւ ժողովուրդ- Տե՛ր ողորմի՛ր:
Սարկավագ- Որպեսզի մեր Տեր Աստված, որն ընդունեց այս սուրբ պատարագը Իր
երկնային եկեղեցու սուրբ մատուցարանում, փոխարենն ուղարկի մեզ Իր Սուրբ
Հոգու շնորհները ու պարգևները, Տիրոջն աղաչենք:
Դպիրներ եւ ժողովուրդ- Տե՛ր, ողորմի՛ր:
Սարկավագ- Ընդունի՛ր, ապրեցրու՛, ողորմի՛ր եւ պահպանի՛ր մեզ, Տեր, Քո շնորհնե-
րով:
Դպիրներ եւ ժողովուրդ- Ապրեցրո՛ւ, Տե՛ր եւ ողորմի՛ր:
Սարկավագ- Ամենասրբուհի եւ միշտ կույս Մարիամ Աստվածածինն բոլոր սրբերի
հետ հիշելով՝ Տիրոջն աղաչենք:
Դպիրներ եւ ժողովուրդ- Հիշի՛ր, Տե՛ր եւ ողորմի՛ր:
Սարկավագ- Դարձյալ միաբանված մեր ճշմարիտ եւ սուրբ հավատի համար, Տիրո-
ջն աղաչենք:
Դպիրներ եւ ժողովուրդ- Տե՛ր, ողորմի՛ր:
Սարկավագ- Մեր անձերը եւ միմյանց Ամենակալ Աստծուն հանձնենք:
Դպիրներ եւ ժողովուրդ- Քեզ՝ Տիրոջդ ենք հանձնվում:
Սարկավագ- Եվ բոլորս միասին ասենք, մեր Տեր Աստված, ողորմի՛ր մեզ՝ Քո մեծ
ողորմության համաձայն:

Դպիրք եւ ժողովուրդ- Տէ՛ր ողորմեա՛, Տէ՛ր ողորմեա՛, Տէ՛ր ողորմեա՛:
Քահանայ- Եւ տու՛ր մեզ համարձակաձայն բարբառով բանալ զբերանս մեր՝ կար-
դալ զՔեզ երկնաւորդ Հա՛յր, երգել եւ ասել:

Դպիրք եւ ժողովուրդ- Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո: Եկեացէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի: Չհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր: Թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց: Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ ի չարէ:
Քահանայ- Չի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս, ամէն:

Աղօթք Տէրունական
Տէրունական աղոթք
Խոնարհումն

եւ Խաղաղութիւն ամենեցուն:

Դպիրք եւ ժողովուրդ- Եւ ընդ հոգւոյդ քում:

Սարկաւագ- Աստուծոյ երկրպագեսցուք:

Դպիրք եւ ժողովուրդ- Առաջի քո Տէր:

Քահանայ- Քրիստոսի Յիսուսի տերամբ մերով, ընդ որում Քեզ Հոգւոյդ Սրբոյ եւ Հօր Ամենակալի վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Բարձրացումն

Սարկաւագ- Պրօսխումէ:

Քահանայ- Ի Սրբութիւն Սրբոց:

Դպիրք եւ ժողովուրդ- Միայն Սուրբ, միայն Տէր, Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Հօր: Ամէն:

Փառաբանութիւն

Քահանայ- Օրհնեալ Հայր Սուրբ, Աստուած ճշմարիտ:

Դպիրք եւ ժողովուրդ- Ամէն:

Քահանայ- Օրհնեալ Որդիդ Սուրբ, Աստուած ճշմարիտ:

Դպիրք եւ ժողովուրդ- Ամէն:

Քահանայ- Օրհնեալ Հոգիդ Սուրբ, Աստուած ճշմարիտ:

Դպիրք եւ ժողովուրդ- Ամէն:

Դպիրներ եւ ժողովուրդ- Տեր ողորմի՛ր, Տեր ողորմի՛ր, Տեր ողորմի՛ր:

Քահանայ- Եվ թույլ տուր մեզ համարձակ ձայնով բացել մեր բերանը, կանչել Քեզ, երկնավոր Հայր, երգել եւ ասել:

Դպիրներ եւ ժողովուրդ- ՀԱՅՐ մեր, որ երկնքում ես, սուրբ թող լինի Քո անունը, Քո արքայությունը թող գա, Քո կամքը թող լինի երկրի վրա, ինչպէս որ երկնքում է: Մեր հանապազօրյա հացը տու՛ր մեզ այսօր: Եվ թո՛ղ մեզ մեր պարտքերը, ինչպէս եւ մենք ենք թողնում մեր պարտապաններին: Եվ մի՛ տանիր մեզ փորձութեան, այլ փրկի՛ր մեզ չարից:

Քահանայ- Քանի որ Քոնն են արքայությունը եւ զորությունը եւ փառքը հավիտյանս, ամեն:

Խոնարհում

[եւ Խաղաղություն ամենքին:

Դպիրներ եւ ժողովուրդ- Եվ քո հոգուն:

Սարկավագ- Աստծուն երկրպագենք:

Դպիրներ եւ ժողովուրդ- Քո առաջ, Տե՛ր:

Քահանա- Հիսուս Քրիստոսով, մեր Տիրոջով, որի հետ Քեզ՝ Սուրբ Հոգուդ եւամենակալ Հորդ վայել է փառք, իշխանություն եւ պատիվ, այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից. ամեն:

Բարձրացում

Սարկավագ- Պրոսխումն:

Քահանա- Սրբերի համար Սրբությունը:

Դպիրներ եւ ժողովուրդ- Դու եւ միայն Սուրբ, միայն Տե՛ր, Հիսուս Քրիստոս, Հայր Աստծու փառքի մեջ: Ամեն:

Փառաբանություն

Քահանա- Օրհնյալ եւ Դու՝ Հայր Սուրբ, Աստված ճշմարիտ:

Դպիրներ եւ ժողովուրդ: Ամեն:

Քահանայ- Օրհնյալ եւ Դու՝ Որդիդ Սուրբ, Աստված ճշմարիտ:

Դպիրներ եւ ժողովուրդ- Ամեն:

Քահանայ- Օրհնյալ եւ Դու՝ Հոգիդ Սուրբ, Աստված ճշմարիտ:

Դպիրներ եւ ժողովուրդ- Ամեն:

Քահանայ- Օրհնություն եւ Փառք Հօր եւ Որդուդ եւ Հոգուդ Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամեն:

Դպիրք եւ ժողովուրդ- Ամեն: Հայր Սուրբ. Որդիդ Սուրբ. Հոգիդ Սուրբ: Օրհնություն Հօր եւ Որդուդ եւ Սրբոյ Հոգուդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամեն:

Թաթախումն

Քահանայ- Ի սուրբ, ի սուրբ, պատուական Մարմնոյ եւ յԱրեւնէ Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի՝ ճաշակեցուք սրբութեամբ, որ իջեալ ի յերկնից բաշխի ի միջի մերում:

Սա՛ է Կեանք, Յոյս, Յարութիւն, Քաւութիւն եւ Թողութիւն մեղաց: Սաղմոս ասացէ՛ք Տեառն Աստուծոյ մերում: Սաղմոս ասացէ՛ք երկնաւոր Թագաւորիս մերում անմահի, որ նստի ի կառս քերովբեականս:

Բեկումն

Սարկաւագ- Սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ մերոյ, դպիրք ձայնի քաղցրութեամբ զերգս հոգետորս: Չի սմա վայել են սաղմոսք եւ օրնութիւնք, ալէլուք եւ երգք հոգետորք:

Պաշտօնեայք հանդերձ երգովք սաղմոս ասացէք եւ զՏէր յերկինս օրհնեցէք:

Հաղորդութիւն

Դպիրք եւ ժողովուրդ- Օրհնեալ է Աստուած:

Քրիստոս պատարագեալ բաշխի ի միջի մերում. ալէլուիա: Չմարմին իւր տայ մեզ կերակուր եւ սուրբ զարին իւր ցօղէ ի մեզ ալէլուիա:

Մատիք առ Տէր եւ առէք զլոյս. ալէլուիա:

Ճաշակեցէք եւ տեսէք զի քաղցր է Տէր. ալէլուիա:

Օրհնեցէք զՏէր յերկինս. ալէլուիա:

Օրհնեցէք զնա ի բարձունս. ալէլուիա:

Օրհնեցէք զՆա ամենայն հրեշտակք նորա. ալելուիա:
Օրհնեցէք զՆա ամենայն զօրութիւնք նորա. ալելուիա:
Սարկաւագ- Երկիւղիւ եւ հաւատով յառաջ մատիք եւ սրբութեամբ հաղորդեցարուք:

Քահանա- Օրհնություն եւ Փառք Հորը,Որդուն եւ Սուրբ Հոգուն. Այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից, ամեն:
Դպիրներ եւ ժողովուրդ- Ամեն: Հայր Սուրբ. Որդիդ Սուրբ. Հոգիդ Սուրբ: Օրհնություն Հորը եւՈրդուն եւ Սուրբ Հոգուն, այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից: Ամեն:

Թաթախում

Քահանա- Սրբությամբ ճաշակենք մեր Փրկչի եւ Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Սուրբ, Սուրբ պատվական մարմնից եւ Արյունից, որ իջնելով երկնքից բաշխվում է մեր մեջ: Սա է Կյանքը, Հույսը, Հարությունը, Քավությունը եւ Թողությունը մեղքերի: Սաղմոս ասացեք մեր Տեր Աստծուն: Սաղմոս ասացեք մեր անմահ երկնավոր Թագավորին, որ նստում է քերովբեական կառքին:

Բեկում

Սարկավագ- Սաղմոս ասացեք մեր Տեր Աստծուն, քաղցր ձայնով հոգետր երգեր երգեցեք: Որովհետեւ Նրան վայելում են սաղմոսներ, օրհնություններ, ալելուիաներ եւ հոգետր երգեր:
Պաշտոնյաներ, երգով հանդերձ սաղմոս ասացեք եւօրհնեցեք երկնքի Տիրոջը:

Հաղորդություն

Դպիրներ եւ ժողովուրդ- Օրհնված է Աստված:
Քրիստոս պատարագված բաշխվում է մեր մեջ, ալելուիա: Իր Մարմինը տալիս է մեզ իբրեւ կերակուր եւիր սուրբ Արյունը ցողում է մեզ վրա, ալելուիա: Մոտեցե՛ք Տիրոջը եւառեք լույս, ալելուիա: Ճաշակեցե՛ք եւ տեսե՛ք, որ քաղցր է Տերը, ալելուիա: Օրհնեցե՛ք Տիրոջը երկնքում, ալելուիա:
Օրհնեցեք Նրան բարձունքներում, ալելուիա: Օրհնեցե՛ք Նրան, ամենայն հրեշտակներ Նրա, ալելուիա: Օրհնեցե՛ք Նրան, ամենայն Չորություններ Նրա, ալելուիա:
Սարկավագ- Երկյուղով եւ հավատքով առա՛ջ եկեք եւ սրբությամբ հաղորդվե՛ք:

Դպիրք եւ ժողովուրդ- Աստուած մեր եւ Տէր մեր երեւեցաւ մեզ,օրհնեալ եկեալ անուամբ Տեառն:
Քահանայ-Կեցո՛ Տէր զժողովուրդս քո եւ օրհնեա՛ զժառանգութիւն քո. հովուեա՛ եւ բարձրացո՛ զսոսա յայսմհետէ մինչեւ յաւիտեան:

Գոհաբանութիւն

Դպիրք եւ ժողովուրդ- Լցաք ի բարութեանց քոց Տէր՝ ճաշակելով զՄարմին քո եւ զԱրիւն. փառք ի բարձունս կերակրողիդ զմեզ: Որ հանապազ կերակրես զմեզ, առաքեա՛ ի մեզ զհոգետր քո զօրհնութիւն. Փառք ի բարձունս կերակրողիդ զմեզ:
Սարկաւագ- Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:
Դպիրք եւ ժողովուրդ- Տէ՛ր ողորմեա՛:
Սարկաւագ- Եւ եւս հաւատով ընկալեալք յաստուածային սուրբ, երկնային, անմահ, անարատ եւ անապական Խորհրդոյս՝ զՏեառնէ գոհացարուք:

Դպիրք եւ ժողովուրդ- Գոհանամք գԶէն Տէր, որ կերակրեցեր զմեզ յանմահական Սեղանոյ քոյ: Բաշխելով զՄարմինդ եւ զԱրիւնդ ի փրկութիւն աշխարհի եւ կեանք անձանց մերոց:

Արձակումն

Քահանայ- Որ օրհնես զայնոսիկ, որք օրհնեն գԶեզ Տէր, եւ սուրբ առնես զյուսացեալս ի Քեզ:

Դպիրք եւ ժողովուրդ- Օրհնեալ է Աստուած:

Քահանայ- Կեցո՛ր զժողովուրդս Քո եւ օրհնեա՛ր զժառանգութիւնս Քո. զլրումն Եկեղեցոյ Քո պահեա՛ր:

Դպիրք եւ ժողովուրդ- Ամէն:

Քահանայ- Սրբեա՛ր զսոսա, որք ողջունեցին սիրով զվայելչութիւն տան Քո: Դու զմեզ փառաւորեա՛ր Աստուածային զօրութեամբ Քով. եւ մի թողոր զյուսացեալս ի Քեզ:

Դպիրք եւ ժողովուրդ- Ամէն:

Դպիրներ եւ ժողովուրդ- Մեր Աստված եւ Տերը երեսաց մեզ, օրհնված է Տիրոջ անունով եկողը:

Քահանայ- Ապրեցրո՛ւ Քո ժողովրդին, Տեր եւօրհնի՛ր Քո ժառանգությունը. առաջնորդի՛ր եւ բարձրացրո՛ւ նրանց այսուհետեւ մինչեւ հավիտյան:

Գոհաբանություն

Դպիրներ եւ ժողովուրդ- Ճաշակելով Քո Մարմինը եւ Արյունը լցվեցինք Քո բարությամբ, Տեր. փառք բարձունքերում մեզ կերակրողին: Դու որ շարունակ կերակրում ես մեզ, ուղարկի՛ր մեզ Քո հոգեւոր օրհնությունը: Փա՛ռք բարձունքներում մեզ կերակրողին:

Սարկավագ- Եվ առավել խաղաղության համար Տիրոջն աղաչենք:

Դպիրներ եւ ժողովուրդ- Ողորմի՛ր, Տե՛ր:

Սարկավագ- Առավել եւս գոհացեք Տիրոջից, որ հավատքով ընդունեցինք Աստվածային, սուրբ, երկնային, անմահ, անարատ ու անապական խորհուրդը:

Դպիրներ եւ ժողովուրդ- Գոհանում ենք Քեզանից, ով Տեր, որ կերակրեցիր մեզ Քո անմահական Սեղանից՝ Մարմինդ ու Արյունդ բաշխելով աշխարհի փրկության եւ մեր անձերի կյանքի համար:

Արձակում

Քահանայ- Որ օրհնում ես նրանց, ովքեր Քեզ են օրհնում, Տե՛ր, եւ սրբացնում ես Քեզ հուսացողներին:

Դպիրներ եւ ժողովուրդ- Օրհնված է Աստված:

Քահանայ- Ապրեցրո՛ւ Քո ժողովրդին եւօրհնի՛ր Քո ժառանգությունը: Քո եկեղեցու ամբողջականությունը պահի՛ր:

Քահանայ- Սրբի՛ր նրանց, ովքեր սիրով ողջունեցին Քո տան վայելչությունը: Դու մեզ փառավորի՛ր Քո աստվածային զօրությունով եւ մի՛ թող Քեզ ապավինողներին:

Դպիրներ եւ ժողովուրդ- Ամէն:

Քահանայ- Չխաղաղութիւն պարզեւեա՛ր ամենայն աշխարհի. Եկեղեցեաց, քահանայից, Թագաւորաց քրիստոնէից եւ զինուորեալ մանկանց նոցա, եւ ամենայն ժողովրդեանս:

Դպիրք եւ ժողովուրդ- Ամեն:

Քահանայ- Չի ամենայն տուրք բարիք եւ ամենայն պարգեւք կատարեալք ի վերուստ են իջեալք առ ի Քէն, որ եւ Հայր լուսյ եւ քեզ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. ամեն:

Դպիրք եւ ժողովուրդ- Ամեն: Եղիցի՛ անուն Տեսնն օրհնեալ, յայսմ հետէ մինչեւ յաւիտեան: (երիցս):

Քահանայ- Կատարումն օրհնաց եւ Մարգարէից Դու եւ, Քրիստոս Աստուած Փրկիչ մեր, որ լցեր զամենայն Հայրական տնօրէնութիւնս Քո: Լի՛ց եւ զմեզ Հոգւովդ Քով Սրբով:

Սարկաւագ- Օրթի:

Քահանայ- եւ Խաղաղութիւն ամենեցուն:

Դպիրք եւ ժողովուրդ- Եւ ընդ հոգւոյդ քում:

Սարկաւագ- Երկիրաժութեամբ լուարուք:

Քահանայ- Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Յովհաննո:

Դպիրք եւ ժողովուրդ- Փառք քեզ, Տէր Աստուած մեր:

Սարկաւագ- Պոռսխումէ:

Դպիրք եւ ժողովուրդ- Ասէ Աստուած:

Քահանայ- Ի Հօրէ լուսյ:

Ի սկզբանէ էր Բանն, եւ Բանն էր առ Աստուած, եւ Աստուած էր Բանն:

Նա էր ի սկզբանէ առ Աստուած:

Ամենայն ինչ նովաւ եղեւ, եւ առանց նորա եղեւ եւ ոչ ինչ որ ինչ եղեւն:

Նովաւ կեանք էր, եւ կեանքն էր լոյս մարդկան. Եւ լոյսն ի խաւարի անդ լուսաւորէ եւ խաւար նմա ոչ եղեւ հասու:

Քահանայ- Խաղաղություն պարգեւիր ամբողջ աշխարհին, եկեղեցիներին, քահանաներին, մեր թագավորներին ու նրանց զինվորյալ զավակներին եւ համայն ժողովրդին:

Դպիրներ եւ ժողովուրդ- Ամեն:

Քահանայ- Որովհետեւ բոլոր բարի տուրքերը եւ բոլոր կատարյալ պարգեւները շնորհված են ի վերուստ՝ Քեզնից, որ Լույսի Հայրն եւ, եւ Քեզ վայել է փառք, իշխանություն եւ պատիվ, այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից. ամեն:

Դպիրներ եւ ժողովուրդ- Ամեն: Թող օրհնված լինի Տիրոջ անունը այսուհետեւ եւ հավիտյան: (կրկնել երեք անգամ)

Քահանայ- Մարգարեների եւ օրենքների լրումը Դու եւ, մեր Փրկիչ Քրիստոս Աստված, որ կատարեցիր Քո հայրական տնօրինությունները, լցրո՛ւ եւ մեզ Քո Սուրբ Հոգով:

Սարկավագ- Օրթի:

Քահանայ- եւ Խաղաղություն ամենքին:

Դպիրներ եւ ժողովուրդ- Եվ Քո հոգու հետ:

Սարկավագ- Երկիրաժութեամբ լսեցեք:

Քահանայ- Հիսուս Քրիստոսի՝ ըստ Հովհաննո սուրբ ավետարանից:

Դպիրներ եւ ժողովուրդ- Փառք Քեզ, մեր Տէր Աստված:

Սարկավագ- Պոռսխումէ:

Դպիրներ եւ ժողովուրդ- Ասում է Աստված:

Քահանայ- Լույսի Հորից:

Սկզբից էր Բանը, եւ Բանը Աստծու մոտ էր, եւ Բանը Աստված էր:

Նա սկզբից Աստծու մոտ էր:

Ամեն ինչ նրանով եղավ, եւ առանց նրա ոչինչ չեղավ, ինչ որ եղել է: Կյանքը նրանով էր: Եվ այդ կյանքը մարդկանց համար լույս էր: Եվ լույսը խավարի մեջ լուսավորում է, եւ խավարը նրան չնվաճեց:

Եղել այր մի առաքեալ յԱստուծոյ, անուն նմա Յովհաննէս: Սա՛ եկն ի վկայութիւն՝ զի վկայեացէ վասն լուսոյն, զի ամենեքին հաւատասցեն նովաւ: Ո՛չ էր նա լոյսն, այլ զի վկայեացէ վասն լուսոյն:

Էր լոյսն ճշմարիտ, որ լուսաւոր առնէ զամենայն մարդ՝ որ գալոց է յաշխարհ: Յաշխարհի էր, աշխարհ նովաւ եղել, եւ աշխարհ գնա ո՛չ ծանեաւ: Յիրսն եկն եւ իւրքն գնա ո՛չ ընկալան:

Իսկ որք ընկալանն գնա՝ ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել՝ որոց հաւատասցեն յանուն նորա: Ոյք ո՛չ յարենէ եւ ո՛չ ի կամաց մարմնոյ. եւ ո՛չ ի կամաց առն, այլ յԱստուծոյ ծնան:

Եւ Բանն Մարմին եղել եւ բնակեցաւ ի մեզ եւ տեսաք զփառս նորա, զփառս իբրել զՄիածնի առ ի Հօրէ, լի շնօրհօք եւ ճշմարտութեամբ:

Դպիրք եւ ժողովուրդ- Փառք քեզ Տէր Աստուած մեր:

Սարկաւագ- Սուրբ Խաչիւս աղաչեսցուք զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց, եւ կեցուցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ, ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ւ եւ ողորմեա՛:

Քահանայ- Պահպանեա՛ զմեզ, Քրիստոս Աստուած մեր. ընդ հովանեաւ սուրբ եւ պատուական խաչիւղ քո ի խաղաղութեան. փրկեա՛ յերեւելի եւ յաներեւոյթ թշնամուոյն: Արժանաւորեա՛ զոհութեամբ փառաւորել զՔեզ ընդ Հօր եւ ընդ Սրբոյ Հոգւոյդ, այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտենից: Ամէն:

Դպիրք եւ ժողովուրդ- Օրհնեցից զՏէր յամենայն ժամ, յամենայն ժամ օրհնութիւն նորա ի բերան իմ:

Քահանայ- Օրհնեալք եղերուք ի շնորհաց Սրբոյ Հոգւոյն. երթա՛յք խաղաղութեամբ, եւ Տէր Յիսուս եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեանդ: Ամէն:

Կար մի մարդ՝ Աստծուց ուղարկված, նրա անունը՝ Հովհաննէս: Սա եկավ որպէս վկա, որպէսզի վկայի լույսի մասին, որպէսզի բոլորը նրա միջոցով հավատան: Ինքը լույսը չէր, այլ եկել էր, որ վկայի լույսի մասին: Նա է ճշմարիտ լույսը, որ լուսավորում է ամեն մարդու, որ գալու է աշխարհ: Նա աշխարհի մեջ էր, եւ աշխարհը նրանով եղավ, սակայն աշխարհը նրան չճանաչեց: Յուրայինների մոտ եկավ, բայց յուրայինները նրան չընդունեցին: Իսկ ովքեր նրան ընդունեցին, նրանց իշխանություն տվեց լինելու Աստծու որդիներ, նրանց, որոնք իր անվանը կհավատան: Նրանք ոչ արյունից, ոչ մարմնի կամքից, եւ ոչ էլ այր մարդու կամքից, այլ Աստծուց ծնվեցին: Եվ Բանը մարմին եղավ ու բնակվեց մեր մեջ, եւ տեսանք նրա փառքը, որպէս Միածնի՝ Հոր կողմից՝ լի շնորհով եւ ճշմարտությամբ:

Սարկավագ- Փառք Քեզ, մեր Տէր Աստված: Այս սուրբ խաչով աղաչենք Տիրոջը, որպէսզի սրանով փրկի մեզ մեղքերից եւ իր ողորմության շնորհիվ մեզ ապրեցնի: Ով ամենակալ մեր Տէր Աստված, ապրեցրու եւ ողորմիր:

Քահանայ- Պահպանի՛ր մեզ Քրիստոս Աստված մեր պատվական խաչիդ հովանու տակ՝ խաղաղության մեջ: Փրկի՛ր մեզ երեւելի եւ աներեւոյթ թշնամուց: Արժանի արա զոհությանբ փառավորել Քեզ, Հոր եւ Սուրբ Հոգու հետ, այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից. ամէն:

Դպիրներ եւ ժողովուրդ- Պիտի օրհնեմ Տիրոջը ամեն ժամ, ամեն ժամ նրա օրհնու-
թյունը իմ բերանի մեջ է լինելու:
Քահանա- Օրհնյալ եղե՛ք Սուրբ Հոգու շնորհներով, գնացե՛ք խաղաղությամբ եւ Տեր
Հիսուս թող լինի ձեր բոլորի հետ: Ամեն:

ԽՈՐՀՈՒՐԴ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ
ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՅՈՒ ԾԵՄԻ
Գրաքար-աշխարհաքար

Խմբագիրներ՝ Գեորգի քահանա Մայիլյան
Ֆլորա Կարադյան

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԶՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՈՆ ՀՈՉԱԿՄԱՆ 1700-
ԱՄՅԱԿԻ ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին - 2001